**Ղարիբջանյան**

**Ղարիբջանյան բնակավայրի** վարչական տարածքը կազմում է 750.0հա, բնակչությունը 1014 մարդ: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 4 կմ հեռավորության վրա, դեպի հարավ, Ախուրյան գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղում գործում է դպրոցը, ակումբը, գրադարանը: